«Հայաստանը և Ֆրանսիան Պայմանագիր ստորագրեցին» հոդվածը «Tert.am» տեղեկատվական կայքում

Հայաստանը և Ֆրանսիան Պայմանագիր ստորագրեցին

Հունվարի 20-ին, Հայաստանի Հանրապետության Կրթության և գիտության նախարարությունը և Ֆրանսիայի Գիտական հետազոտությունների ազգային կենտրոնը (Centre national des recherches scientifiques-CNRS) Փարիզում ստորագրեցին համագործակցության Պայմանագիր:ՀՀ Կրթության և գիտության նախարարության անունից Պայմանագիրը ստորագրեց Գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը, ֆրանսիական կողմից Պայմանագիրը ստորագրեցին Ֆրանսիայի Գիտական հետազոտությունների ազգային կենտրոնի նախագահ տկն. Կատրին Բրեշինյակը և Գլխավոր տնօրեն Առնոլդ Միգուսը:
Պայմանագրի նպատակն է խորացնել երկու երկրների միջև գիտության բնագավառում համագործակցությունը: Պայմանագրով նախատեսված է երկու երկրների գիտաշխատողների փոխանակումներ, համատեղ գիտահետազոտական ծրագրերի իրականացում, համատեղ գիտաժողովների և սեմինարների կազմակերպում: Այդ նպատակի համար կօգտագործվեն CNRS-ի միջազգային համագործակցության կառույցները՝ Գիտական համագործակցության միջազգային ծրագրերը, Միացյալ միջազգային լաբորատորիաները և Միջազգային գիտահետազոտական խմբերը: Ծրագրերը կիրականացվեն համատեղ ֆինանսավորմամբ: Այս մասին հայտնում է ՀՀ ԱԳՆ մամուլի և տեղեկատվության վարչությունը:
Ստորագրման արարողությանը նախորդած հանդիպման ժամանակ կողմերը գոհունակություն հայտնեցին, որ Հայաստանի ու Ֆրանսիայի միջև երկար տարիներ ծավալվող գիտական համագործակցությունը պաշտոնական հիմքի վրա է դրվում, ինչը նոր խթան կհանդիսանա այդ համագործակցության զարգացման համար: Իբրև երկու կողմերի համար առավել մեծ հետաքրքրություն ներկայացնող ոլորտներ նշվեցին մասնավորապես մոլեկուլյար ֆիզիկան, քիմիան, մաթեմատիկան, հումանիտար եւ սոցիալական գիտությունները:
Գիտական հետազոտությունների ազգային կենտրոնը գիտահետազոտական պետական հաստատություն է, որը գործում է Ֆրանսիայի Բարձրագույն կրթության և գիտության նախարարության հովանավորությամբ: 2008թ. Կենտրոնի բյուջեն կազմել է 3,277 միլիարդ եվրո: Կենտրոնի աշխատանքն ընդգրկում է գիտության և տեխնոլոգիաների բոլոր բնագավառները: Կենտրոնն իր տարբեր լաբորատորիաներում հյուրընկալում է տարեկան 5.000 օտարերկրացի գիտնականի, աշխարհի 60 երկրների հետ ստորագրել է համագործակցության 85 պայմանագիր, որոնց մեջ՝ նախկին խորհրդային երկրներից Ռուսաստանի, Բելառուսի, Վրաստանի, Ադրբեջանի և Ուզբեկստանի հետ: Միևնույն ժամանակ, Ֆրանսիան, Ռուսաստանից և Բելառուսից հետո, երրորդ երկիրն է, որի հետ Հայաստանն ստորագրեց նման պայմանագիր:

21.01.09 ***«Tert.am» տեղեկատվական կայք***